Խայթուածոց խղճիս՝  
Շատ մեծ դիւր արար :  
Զի կուսին լուեալ ,  
Ասաց քաղցրարար ,  
«Եւ դո՛ւ յորոգայթ  
Նորա որսացար :

Գիտեմ ո՞վ է նա .

Այլ ստիպայն մնայ » : —

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳՈՑ

1. ՇՆՈՐՀՐ ԷՐԷՔԻՆ քոյր կուսանքս  
Պայծառ, Անթառամ, եւ Չուարթ՝  
գոտերք Գինուոյ՝ և Գեղոյ, կամ Աստղու-  
կան և Բաքուսի, որք միշտ զհետ զը-  
նային Աստուածուհւոյն հեշտութեանս

2. ԱՐՀՄ, Արհիման կամ Խարաման  
որդի Չբուանայ, եղբոյր Որմղդի կամ  
Արամաղդայ, սկզբնահայր չարեաց եւ  
աղիտից աշխարհի, Չի որ ինչ բարիք՝  
ի Որմղդէ արարան, իսկ որ չարք՝  
Մարհմէ, ասեն քեշակարկատքն Պար-  
սից, Կախն ՚ի մէջ զօրաց Արհիման  
և Որմղդի առիթ ետուն հրաշակերտ  
երկնամարտութեանցն Միլտովնի՝ ՚ի Նը-  
բախան իւր կորուսեալ :

5. Սուտ Բերանածին, զի առաւ-  
պելեն Բրահմանք թէ ծնեալք իցեն ՚ի  
բերանոյ Բրահայ՝ հօր հնդիկ արարչու-  
թեան : Տես Պարս. Հնդ :

4. Հարսուէք դաշտաց անուանին  
առ քերթողս՝ մտացածին սղիք ինչ պա-  
հասան դաշտաց :

5. Նանէ, Աթէնաս կամ Պալլաս  
Աստուածուհի իմաստութեան և պա-  
տերազմի :

6. Ար՝ ամօթ կամ նախատինք սյ-  
լազգերէն . բայց ՚ի բարդութեան ար-  
համարէ բառիս կայ նոյն նշանակու-  
թեամբ ար — համար այսինքն առ՝ ամօթ  
կամ նախատինք համարեալ :

7. Աժդահակ արքայ Մարաց , զոր  
սպան Տիգրան , զորոյ վարանաց և ըղ-  
տարակուսանաց՝ անս խորէն :

8. Այսվդիս , կամ Ավդ նշանակէ  
աղատ ՚ի պատերազմաց , ուր զձեծ կը-  
ռատուն Ռամայ կործանեաց Ահոյար  
արքայ , և այժմ ուխտաւորք ՚ի վերայ  
դեռոյն առնեն դժախտ կամ տօն , զի  
ասեն թէ անդ ծնաւ Ազման եղբայր  
Ռամայ :

9 . Հիմանտեան աստուած կոչի Սիւս ,  
ահաւորազոյն ՚ի դիս համօրէն Հընդ-

կաց՝ վախճանաբար զօրու թեամբ իւրով  
տէս Պարս. Հնդ. ստեպ :

10. Ճակատագիր, Բազդ, Պար-  
կեանք, բայց Գրող յայս միտ առեալ  
ըստ նախնի մեհենահան պատմութեանց  
մերոյ աշխարհի, երևի գոլ Հրամն,  
Գալիբ, կամ Տիր. սր դրօշէր կրծոցն ՚ի  
վեր՝ գլխով Վարազու, և ՚ի խանարհ  
տաամբ ձկան թեփտեալ, յաջ իւրում  
դրիչ, և ՚ի ձախն կազամար : Գլխով  
Վարազու զչամբամուտ խուզողու թիւն,  
և տաամբ ձկան՝ զ՚ի խորս խնատու-  
թեան սուղանիլն յայտ արարեալ : Առ-  
ջի և Գիւան, և Երազնդհան, առ  
Ագաթանգեղոսի : « Տաճար Երազնդ-  
հան պաշտաման Տրի դից, գալիբ գի-  
տութեան քրմացն անուանեալ գիւան  
գրչի Արմզդի ճարտարութեան » : Ան-  
ուանքս Տրդատ, Վարազդատ, Վա-  
րազդէն, յայտ առնեն զահաւորու-  
թիւն նորա առ նախնիս Հայոց, իսկ  
աղ կնքել Վարազդիբ մատանեալ իբ-  
րև զմեծագոյն երդումի, ոչ ՚ի սակս

ցած և բարձր փորձածոյ գրոցն էր՝  
որպէս զնէ հնագիր մեր, այլ ՚ի սակա  
ռնեւոյ զպատկեր Վարադուս այսորիկ :

41. Ժ ՈՒԿ . Ժամանակ ընդարձակ՝  
դար կամ յախտեան՝ սարունակող ան  
համար ամաց . նոյն ՚ի մեզ և ՚ի Հնդի  
կըս : Տէս Պարս . Հնդ . Ժան . 1 :

42. Տաներան Քաշիւ զարքայն Ար  
եաց իմանամ, զի Միհրնեբուհ տու Եղե  
շայ՝ կոչէ զինքն “Վ զբուկ Երան և Տա  
ներան ր : Իրանու թորան :

15. Ըստ բուն հնչման Հնդկաց՝ Ա  
ճրբայ . որ ըստ մեզ՝ ամեր տայ, կեանք  
տայ, կենդանութիւն տայ, ո՛չ այլ ինչ  
է, եթէ ո՛չ զինի Հայաստանի՝ այս օրի  
նակ այլաբանեալ ՚ի Մահաբհարաթ գը  
րոց : “ Է լեառն մեծ և գեղեցիկ օրոյ  
անուն ՄԵՐՈՒ կոչի, ամենաբարձր շեղձ  
փառաց՝ որ անդրադարձուցանէ զճա  
ռագայթս Արեգական ՚ի միջոյ լուսա  
փաղիխն եղջերաց իւրոց, ոսկեպաա  
եալ շորեքիուսի՝ բնակարան հանդիսա  
նայ Դիւայ և Գանթարվաց, անմատոյց

Ի մարդկանց մեղաւորաց , շուրջ պատ-  
եալ պահի ի միշտպաց զարհուրելեաց :  
Ընդ եմակո նորա յարազուարճ դարու-  
րիք երկնաւոր բժշկութեան . և կայ  
ճեղքելով զերկինս գերամպոյին գա-  
գաթամբ , լեւոնն հզօր անմատոյց եւ  
Ի մտաց մահկանացուաց :

Սոսրժ այսինքն քաջք եւ ամենայն  
փառաւոր զօրութիւնք երկնից իջեալ  
Ի կատար բարձու լերին այսորիկ՝ յառ-  
եան Նստան յահագին խորհել զգիւտոյ  
անմահականն Աճրիպայ . կամ ջրոյն՝ որ  
Աճր պայ : Իւ Նարայան անդր գոլով  
խօսեցաւ ընդ Բրհմայ , և ասէ , « Թող  
հարցի Ովկիանոս իբրև զինոցի կաթին  
միաբանեալ զօրութեամբ Սոսրայ և Ա-  
սոսրայ . մինչև կողիացեալ Աճրիպայ ի  
վեր ելլէ յերես շուրջ բազմաց , էք  
անդ և Մանդար կամ լատտ լեւնաչափ  
ուր բնակէին Ալեւարժ , այսինքն կին-  
դանի սբք Դևժ և Ադսարժ , մետաքան  
հազար ոճ բարձրութեամբ եւ մետա-  
քան հազար ոճ խորութեամբ խորով :

Զոր իբրև շխարային դեքն շարժել 'ի  
տեղւոջն՝ ուղարաւոր մատեանն առ Վիշ-  
նու, որ բազմէր ընդ Ֆրհմայ և ասնն  
ցնասա, « Արիք տեարք, ցուցէք զխմաս-  
տու թիւն ձեր զմե ծ' առ օգտի մերում » :  
Վիշնու և Ֆրհմայ զիջեալ 'ի հայցուա-  
ծրո նոցա՝ հրամայեցին զարքայն օձից  
զԱնանգոս յանդիմանն կալ անդ, և առ-  
նել զոր ինչ միանդամ եւ Նարայանն  
պատուիրիցէ : Յայնժամ Անանգոս օգ-  
նու թեամբ Սոսրայ առ զՄանդար, եւ  
յանդիմանն արար ծովու՝ խոստացաւ  
ծովսկալին զբաժին, և բարձեալ ըզ  
Սանդարն 'ի վերայ Կոճար Ռաջայ կամ  
թագաւոր Կրայի, կամ Խեցգեանին,  
(աշխարհի Հայոց,) ձեռն 'ի գործ արկ  
Ինդրա պտոյտքէլ զայն իբրև զանիւ  
կողեհանաց, որ Վիշապն Վաստապի,  
(հորիզոնն իմ ուրբա,) եղև նոցա 'ի սլա-  
րան, և այսպէս Դիտ, գետ, Ասորտ և  
Դանոստ, հարին 'ի հնուին զովկիանոս  
'ի զիւսս Ամբիտայ : Ասորտ 'ի կողմա-  
նէ գլխայ օձին գործէին, և Սոսրտ 'ի

կողմանէ՛ տտանն, իսկ Անանայս զիւսաց  
մեծաւոր՝ կայր սաքնիթեր Նարայանայ :  
Եւ պատէս այնքան շարժելն զգլուխ  
օձին և հարկանելին՝ մինչ հուր ելանէր  
ի բերանոյ նորա գալարովք ծխոյ . իսկ  
շաչիւն ծովու ՚ի հարկանելոյն իբրև  
զորտո ահագին ամպոց լեկն լինէր . ա-  
մենայն շունչ կենդանի մեռանէր ՚ի  
ջուր . առիւծ , և առանձնասէրն փիղ  
հարան հրով բերանոյ օձին և ծախե-  
ցան ՚ի կորուստ : Հուր շեջու ՚ի հե-  
ղեղաց , զոր անմահն ՚նդաւ հոսեաց ՚ի  
վերստ : Եւ ՚ի բազադբութենէ ամե-  
նայն գոյութեանց յուղեցելոցն հար-  
ուածովքս՝ Սորտ ընկալան զանմահու-  
թիւն : Արդ ջուրք անդնդոց զանգեալ  
ընդ հիւթոց էակացն՝ արտադրեցին  
յիւրեանց զտեսակ իմն կողւոյ կամ իւ-  
ղոյ . ուր զօրք հրեղինաց վերստին մա-  
տուցեալ առ Բրհմա , առիշն բարեաց՝  
ասեն . բաց ՚ի Նարայանէ ամենայն  
Սորտ և Ասորտ վաստակեցան աշխա-  
տութեամբ՝ եւ տակաւին շէք Աճիք :

Յայնժամ ասէ Բրմհա ցՆարայան, զօ-  
րացն զնոսա կրկին զօրութեամբ, զի գու-  
եա ապուէն նոցա: Ասէ զնա Նարայան. Տայ  
զօրութեան՝ որոց ՚ի գործ եկեայեն. ընկեայի՛  
Սանդար ՚ի ծով: Չայս լուեալ ամենեքին  
՚ի գործ անդր գիմեցին և սկսան հար-  
կանել զՈվկիան, յծրմէ ելին Արեգա-  
կըն և Լուսին, ապա Սրի՛ աստուածու-  
հի բազդի, որ բնակի ՚ի Նունուֆար  
Զուր. ապա Սո-բարէա աստուածուհի  
զինւոց, և սպիտակ երկաթին Ո՛ճիսարա-  
աւ կոչեցեալ, ապա ակն Քոսսարուք կո-  
չեցեալ, զոր արկանէր Նարայան ՚ի Լանջ  
խւր. սրպէս և Փարիզապ ծառն առա-  
տութեան և Սո-բարէի կոմն ցանկալից,  
կամ որ ընու զամենայն ցանկութիւն  
սրտի: Լուսին, Սո-բարէի՛ Սրի Է Ո՛ճ-  
իսարա ընթացան համաշաւիզ Արեգա-  
կանն, ապա ել Դև Տանոսանդարի, ա-  
նօթ լի ամբասա՛ ՚ի ձեռին իւրում. ուր  
ամենեքին աղաղակ բարձին իբրև ընդ-  
խւր իսկ սեղհական ստացուած: Յայն-  
ժամ ել Տրուսապ վիղ ամենազօր, զոր

ցարդ տնի հղօրն Երկնից . և ՚ի դարձ  
եալ խառնելոյ զժողովն՝ մակարդեցաւ  
Թոյն մահու . Սկզբանիւ Բրահայ և  
կուլ զայն . որ կապուտակ ներկեաց  
զկուլ նորա . յորմէ և զանաւն Նիւ  
հանս կամ կապուտակն ընկալաւ : Յայն  
ժամ Սորաքէլ ասելի բազմաց եղև ,  
իսկ Նարայան զկերպարան Մոհիտ Մայեայ  
զգեցեալ յիդական սերի՝ գեղով խ-  
րով յասուշ կրթեաց զնտա . և առ-  
եալ զԱրիսն՝ ետ յՍորաքէլ . բայց  
իբրև վերտօին յարձակեցան Ասոր  
՚ի վերայ Սորայ՝ Նարայան ՚ի կերպա-  
րանս կնօջ յափշտակեալ յիշխանն նո-  
ցա՝ արբ ՚ի նմանն . և իբրև Սորտ և օ  
մանակից լինէին կենդանարար բաժաւ  
կին՝ Ռահու ոմն յԱսորայ կերպարանաւ  
փոխեալ ՚ի Սոր . սկսաւ ըմպել և ին-  
քըն . բայց չև հասեալ ջրոյն ՚ի կոկոր-  
դըն՝ մինչ Արեգակն և Լուսին . որք  
բարեկամութեամբ էին ընդ Սորս  
յայտնեցին զխարէութիւնն . ընդ որ  
Նարայան հաս զգլուխ նորա շախտի-

իւրով, և եղև թշնամութիւն 'ի մէջ  
նորա և Արեգական և Ղուսնի՝ մինչեւ  
ցայսօր ժամանակի, այն ինչ յանկարծ  
'ի վերայ յարձակի և խաւարեցուցանէ  
զնոսա » : ( Քամ Սուրբ Գրոց, Ռահու  
Հնդկաց, Սեօրդիք Հայոց, և ստուե-  
րըն աստէն առեալ՝ զմիւսնոյն իր եւ  
անձ նշանակեն : ) Նարայան կրկին յայր  
մարդ փոխակերպեալ մարտ պատերազ  
մի եւ ընդ Ասորացն մինչեւ արիւն  
փոխել նոցա և աղաղակ Հա՛ն եւ հա՛ր  
լսելի լինէր յամենայն կողմանց : ՆԱՐ  
և Նարայան իջին 'ի դաշտ անդր 'ի մի-  
ասին ( տե՛ս ծնն. ) Նարայան ետես 'ի  
ձեռս ՆԱՐԱՅ զաղեղն երկնից, որով  
զմտաւ ած զէն իւր զյաղթ և զուպ-  
ռիչ Ասորաց՝ Սոգարսան անուն, որ  
շողայր իբրև զքոց ողջակիզի, եւ յար-  
ձակէր 'ի թշնամիս իբրև զՊիտակ՝ յօ-  
րանալ արեամբ : Ապա Ասորո՛ լերինս  
'ի լերանց կորզեալ հասեն ընդդէմ Սո-  
րաց : ՆԱՐ տեսեալ թէ տաղնապ մեծ  
էր Սոգարացն յԱսորաց անտի՛նիսից՝ զճա-


Նասպարհ էրկնից սակէօթիդեան նեւթիւք,  
և կործանեաց զգաղաթունս լերանց,  
(ասա՛ զաշտարակն) փայլատակամբ  
շանթից իւրոց : Աստուծո՛ր ՚ի ծով և սիրտ  
էրկրի սողան մազապուրծ : Չափրս եւ  
Սոփարսան վերացան յերկինս՝ ուստի  
էկեալն էին . և Սոփո կանգնեալ՝ տա-  
րան եղին զԻճոփարն ՚ի տեղւոջ իւրում,  
և ահագին գոչմամբ դարձան ջուրք ՚ի  
տեղիս իւրեանց՝ և Քնդուս ետ ց՛Նարս-  
յան զջուրն կենաց պահպանել վասն իւ-  
րոցն ամենեցուն » : Մտադիր ընթեր-  
ցողն կարէ սո՛րդ ՚ի սարգոյ խմանալ .  
զի թէ Ա՛րքս Հնդկաց, թէ մԷբոս,  
կամ Դամբեր Յունաց, և թէ Նեկ-  
տար Քաղդէացւոց, ո՛չ ոյլ ինչ է՝ եթէ  
ո՛չ գինի Հայաստանի, նախ մշակեալ  
՚ի Նոյն կամ ՚ի Նարայանէ՝ յետ համա-  
տարած հեղեղաց : Թողեալ դքանի մի  
անուանս և անցս ՚ի շնորհս քերթու-  
ղին Հնդկաց՝ զամենայն մի առ մի հա-  
մաձայն գտանեմ թէ Սուրբ Գրոց, և  
թէ պատմութեան Աղգիս մերոց :

44. Չաստոււած հաստատու[թեան  
էրկնից և Տէր Սոսերգայ, կամ Եղիւ-  
սեան դաշտի Հնդկաց :

15. Կաղատիք՝ երեքին քորք Չաբհու-  
բանաց 'ի դժոխս :

16. Տիր՝ Հրատն կամ Ուղարիդ :  
տէս ծան . 16 . բ : Թէ 'ի տպագրու-  
թեան Ագաթանդեղոսի . և Թէ յառ-  
ման Հնաստօսի մերոյ՝ աղաւաղեալ է միտ-  
քանիս «Նախագիպեալ 'ի ճանապարհի  
Երազացոյց : Երազընդհան պաշտաման  
արի դից ' դպրի դիտու[թեան քրմաց ո :  
Ի նե բքոյ՝ դնի նօտքագիր՝ պաշտամանդրի :  
Պարտ էր գրել պաշտաման ՏՐԻ դից :  
որ նոյն է ընդ Հրատին . զի Տիր 'ի  
բարբառ մեք . և Թիր կամ Նէր 'ի լե-  
զու Պարսից՝ զաստկու[թիւն ընթացից  
մոլորակին ցուցանեն : Մոգպետն առ  
Եղիշայի զպահապանս բանդարկելոց մե-  
րոյ՝ 'ի Դարի ԹԻՐ հրաւիրէ, այսինքն  
'ի դուռն տաճարի Տիր դից :

17. Խուճար է բուն հայ, խուճառ  
որպէս շնառ . կատուառ . թուրքառ . և  
այլն, այսինքն առեալ 'ի խմելոյ :



ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

# ԴՐՈՒԱԳ.

## ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՑ

Փոփոխութիւն Սօնդիպեայ, գիր  
 Վալիդասայ, 'ի կոչունսն հրաւեր, զԵՐ-  
 Տանալի և յանկարծ յեղափոխութիւնք  
 վիճակին Սօսայ: Խրատ Սօնդիպեայ,  
 բազմ խնջոյից, արբեցութիւն, յառ-  
 նել Սօսայ և դտանել զՎալիդաս և ըզ-  
 կին նորա ընդ խորդով: Սօնդիպեայ  
 աներևոյթ գնալ տարակոյսն անհնա-  
 րին, թաղումն սպանելոցն, ելն 'ի  
 հանդիւր նորա, հանդէս կրօնասիրու-  
 թեան Հայոց, հիւանդացեալ կալ առ-  
 քրիշնայ մեհենաւն 'ի Հուստի, պա-  
 տահել Ստրանաքայ, հրաշակերտիցն  
 ւնկն գնել ասացուածոց նորա, Սիրոյ  
 յնդիր առ Մայր իւր՝ որ սատակ նմա  
 լուսոյ կալ, և ստիպէ զՎրին մեր  
 ի ճառ:

# ՔԵՐ

ի

ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

ԵՐԳ ԵՐՐՈՐԴ

Ա.Զ.Ի.Ի անց ամիս  
'ի վերայ բանիս ,  
Յորում գողջիր , Կոյան  
Թաղեալ 'ի Թախիծ ,  
Մերթ 'ի վայր լռինս  
Ողբայր ցաւադինս .  
Մերթ յոգւոց հանէր  
Հառաչ մահածինս :

Մերթ յԵրկինս 'ի վեր  
Ակնապիչ հայէր :  
Մերթ գլուխն 'ի կոր'  
Զարտասուս ցօղէր ,  
Մինչ յորժամ Նիպաղն ,  
Աչաղուն Աստուած ,

Զայր թուղթ 'ի ձեռին ,  
Ի ներքս անդր էած :

Թօթափեալ իսկոյն  
Զխորին ախրութիւն ,  
Տերեւ ոսկեգիր ,  
Առ իս կարկառէր .  
«Արի Սօս Վանի ,  
Տե՛ս դի՛նչ 'ի Տալի ,  
Տողեաց քեզ ասաց » ,  
Արքայն Վալիդաս » :

Ընդ հնչիւն անուան՝  
Զարհուրեալ դողամ ,  
Յորժամ Սանսկիտըն ?  
«Այսպէս հասկանամ .  
Վալիդաս Ռաջայ՝<sup>3</sup>  
Քաջին Սօս Վանեաց  
Ողջոյն առաքէ  
Շատ՝ 'ի Դից Լաչմեայ՝<sup>4</sup> :

Ո՛չ գիտեմ ընդէր ,  
Այօքան համակիր  
Լինի քեզ ոգի ,  
Ըզտիւ եւ զիշեր :

Գուցէ յառաջնում  
Յընընդեան մերում ,  
Համամայր ծընաք .  
Մի աղգ , մի արիւն ,

Եւ նոյն երկոքին

Յընցուք վերըստին ,  
Թէ կեցցուք սիրով  
Աստ 'ի միասին :  
Ուստի եկից ես ,  
Սուերդեան<sup>5</sup> առ քեզ  
Ի ծափի եւ ծիծաղ  
« աստարել հանդէս » :

Գողն 'ի կախազան ,

Զոյր երկիւղ մահուան  
Բառնայ յերեսաց՝

Գոյն կենդանութեան :

Ոչ այնքան ըզգայ

Սհատիտա եւ ահ ,

Որքան ես 'ի դիւտ

Նամակի նորա :

Ժըպիտ անձանօթ

Մաւալ ընդ ծընօտ

Ակնարկեալ առ իս  
Ասաց համառօտ ,  
«Տէս երկրի մերում  
Պատիւ տայ պատւոյն  
Զափ արդար չափէ  
Եւ արդարութիւն :

Գնահ Սօս Աանի ,  
Զի հաց օտարի  
Զրրին կերողաց  
Դժուարաւ մարսի :  
Հրրաւէր կարդահ  
Քում կաշիդասայ ,  
Եւ վարար վառեակ  
Տարիածուի նորա » :

Զարմանք կալան դիս  
Ընդ անկարծելիս ,  
Յեղյեղոյթ բնութեան ,  
'ի եղանակ խօսից :  
Թուէր հորիդոն ,  
Պղտորեալ դեղոյն ,  
Պարզել 'ի պայծառ  
Սիրոյն հաշտութիւն :

«Կամք քո եղիցին» :

Ասացեալ նմին՝

Լուռ , ախուր եւ լուրջ ,

Չափեցի զուղին :

Միայն ժամ 'ի ժամ ,

Խորհելով յիս դամ .

Թէ ես՝ որ չունիմ

Գէթ հինգ կրրեղան .

Չիմրդ փառալից

Նորուն խնջոյից ,

Խնջոյ հաւասար

Կազմել կարացից :

Եւ այս իսկ արատ ,

Զի մերկ ծընաւ մարդ ,

Եւ յաղքատութեան ,

Կապեալ յորոգայթ :

Ոչ յայլոց չարեաց ,

Շատ խորշի 'ի բաց ,

Որքան յայնմանէ՝

Յոր եղ զնա Աստուած :

Թէ այս՝ եւ թէ այն ,

Քաղցրութեամբ զիջան

Կալիդաս եւ կինն ,  
Պատուել զիմ սեղանն :

Քայց յորժամ հատաք  
Չուղւոյն հասարակ ,  
Բարէ <sup>6</sup> տեսարան  
Հրաշադան տեսաք .  
Ըստիւս անուշակ  
Վարդ ու մանուշակ ,  
Փողփողեն գողջիր ,  
Զփողոցին յատակ :

Իսկ աստի՛ անտի  
Իարքասին մեծի ,  
Բառնան <sup>7</sup> քիլենիք ,  
Շար բայմենակի ,  
Քայց մտեալ ՚ի բակ ,  
Շատ ըսքանչացաք .  
Որ փոխեալ գողջիր ,  
ՅԱդին փառունակ՝

Ընծայէր աչաց  
Ուրախ հայեցուած ,  
Եւ բոյրս անուշից  
Ի կազգոյր կենաց :

Իսկ տուն մեր բարէ ,  
Ո՞ պատմել կարէ ,  
Եթէ Որմզդին <sup>8</sup>  
Զիցէ մարդարէ :

Զի բաղմոցք ոսկի ,  
Բարձքըն վարդմընի .  
Կահ ու կարասիք  
Ողջոյն արքենի .  
Ուր խորոցըն թաւ  
Մաւալ խաւ 'ի խաւ ,  
Ճերմակ ու կապոյտ  
Խառնեալ երանդաւ :

Կոհակ առ կոհակ  
Մածանեն համակ ,  
Յայիս հարկանեն  
Ըզտուն ընդարձակ :  
Սնդ 'ի կեղրոնի  
Որպէս 'ի կղզի ,  
Սմբառնայր սեղան  
Բիւր բարութեամբ լի :  
Ի վերայ որոյ՝  
Կունտ ոսկւոյ սրբոյ .

Եւ կուռ 'ի գնախն  
Ձոյլ անմահ Դրմու Թ :  
Ձոր անդրադարձիկ ,  
Յորմոցն հայելիք ,  
Պատկէին 'ի բիւր  
Տարադ գեղեցիկ :

Ի վերնակողման  
Բազմ սրբուհական .  
Յորում նստան հիւրք  
Մեր բարեկենդան :  
Դիցուհիդ ծանեամր .  
Ձի պըսակ հիւսեալ  
Յաջոյ Անեղին  
Է կին տընարար » :

ՅԱՅՆԺԱՄ Սօնդիպի  
Առեալ մեկուսի ,  
Ձեւ դայս օրինակ  
Խօսել խուճապի :  
« Միայն այր ժուժկալ  
Կարէ պատիւ տալ .  
Հապան զգոյշ , Սօս ,  
Բնու չարբենալ » :

«Ո՞ շաղեալ ընդ մուր  
Եւ կայցէ մաքուր :  
Փորձ գոսկին յայտնէ  
Ընկեր զընկեր իւր » :  
«Միայն ըզգոյշ կանց՝  
Սասց եւ էանց .  
Իսկ ես ընդ հիւրոց  
Բազմեցայ 'ի հաց :

Սյւ որ չէ տեսեալ,  
Եւ ոչ փորձ առեալ  
Ըզկալիդասայ՝  
Կարէ դարմանալ,  
Թէ զի անվեհեր  
Ուտէր եւ ըմպէր,  
Եւ զընկերն 'ի նոյն .  
Զարիս յորդորէր :

«Գու՛ որ ոչ ըմպես» ,  
Սասց . «ազդ առնես,  
Զի եւ ես ծարաւ ,  
Ելից 'ի տանէս :  
Սրդ մի ըմպեր դու  
Զայս դաւաթ գինուոյ ,

Ի կեանս այնորիկ՝  
Որ զայս ետ խնջոյ .

Եւ տեսցեա , Պարուն ,  
Զի սեղան եւ սուռն  
Քեզ միայն թողեալ՝  
Մեկնեցայց իսկոյն » :  
Երբ ընկալայ զայս ,  
Յաջորդեաց այլ թաս ,  
Տարաւ զինին դիտ՝  
Տնդեաց 'ի խելաց :

Մերթ ըսկսանէր  
Քիթըս երկարել ,  
Մերթ անօթանին  
Սեղանին՝ պարէր .  
Մուտ հուր 'ի գլուխ  
Յաչաց ցնդեաց ծուխ :  
Պատալեան <sup>10</sup> զինեւ ,  
Պատեաց մառախուղ ,

Զիմացայ ո՞րքան՝  
Զըգեցաւ երկայն  
Այս մեռօրինակ  
Թմբիր թախծութեան :

Այլ յորժամ յարեայ,  
Տխնւր միջօրեայ  
Ի սուգ ինձ հանէր  
Զամէն առարկայ :

Տուն դուրկ 'ի դարդուց՝,  
Հաշէր յարտասուս,  
Դըրունք եւ դարակք  
Կորդք 'ի կրքնկոց :  
Ա՛յ, այ բաղդ դժխեմ,  
Արթմնի իցեմ.  
Եւ թէ սոսկ երազ՝  
Զոր արդ տեսանեմ : —

Եւ զինչ այն կիտուկ,  
Տժգոյն եւ տաղտուկ,  
Որ յանկեանն, ասեմ,  
Դիզանի յատուկ :  
Որպէս կողոպուտ,  
Զոր 'ի մօտալուտ :  
Հինից փախուցեալ՝  
Թողու ժողովուրդ :

Նախ զայն զննեցից,  
Եւ ապա տեսից ,

Թէ՛ մ, որ խոռով  
Ի խնջոյս ելից՝  
Ասել սոսկանմ' ես՝  
Երբ մատեայ յայն դէ՛ղ,  
Արհաւիրք անեղ  
Պաշարեցին դիս՝

Մոսկալի մահուան  
Տխուր տեսարան .  
Կալիդասն եւ կին  
Հանին յանդիման .  
Զի զըլուխք հատեալ  
Եւ շամփրեալք իրար  
Ի խակամբքն՝ եւ կան  
Ընդ խորգով արկեալ .

Արդ՛որ Եհովան .  
Այսքանն սաստիկ ան  
Յարարածըս քոյ՝  
Իրոշմել կարաց Ման՝  
Ա. յս վարձ ամօթոյ .  
Ա. յս վախճան դինւոյ .  
Ողբանմ' Կալիդաս ,  
Զողորմ' կորուստ քոյ՝

Անդ նախ ձեռն 'ի դործ  
Արկեալ մահափորձ ,  
Գուր փորեցի խոր  
Խեղճ հիւրոց խմոց .  
Երկրին օրինաց  
Ներհակ էր դործ այս ,  
Որ եթէ աշկեար ,  
Բերէր պատուհաս :

Ձի անդ ոչ թաղեն ,  
Այլ յաճիւն դատեն ,  
Ուր լ'առն դիշոյ՝  
Ընկերէ եւ յ կին ,  
Այլ ուր Արփենին ,  
Եղեւ խնդիր իմ .  
Կորեալ , եւ կորոյս  
Յոյս բովանդակ իմ :

Ի դուր դամենայն  
Խորշ մաղեցի տան ,  
Եւ դուղեղ դադարկ  
Մըզեցի ունայն .  
« Միթէ հուղկահար  
Մուտ այսր արարեալ ,

Շամբրփեաց դերկոսին ,  
Ի տէգ մահասայր .

Եւ դերի վարեաց  
Զոր ողխա դերեաց .  
Բայց դարմանք իրաւ ,  
Որ յիս խնայեաց :  
Գուցէ դիս անմեղ ,  
Եղ յօտարի տեղ .  
Կամ Կոյսն առ անձին  
Պաղատանս եհեղ » :

Սօսայ չէր հնար  
Ըղնա մոռանալ .  
Կամ տրղայարար  
Նստիլ եւ ողբալ :  
Յորոն ստրէ սար  
Յամենայն աշխարհ ,  
Սոսկ 'ի հանդիսին՝  
Առնելի մընայր :

Խնդրեմ թէ իբրեւ  
Զընդ ամպեալն արեւ .  
Գրտից՝ որ չնորհ  
Շողայցէ զինեւ :

Ուխտեմ Վահագնի <sup>12</sup> ,  
Բաղին արծաթի .  
Թէ գիւտ կորստեան  
Ինձ յաջողեսցի :

Ելանեմ յուղին ,  
Յիշեմ զՆերքինին .  
Յորմէ 'ի կսկիծ  
Ինձ բերի զտակին » :  
ՀՐԱՇԱԿԵՐՏՆ Աստղիկ  
Որ ցայս վայր լռիկ ,  
Յուճկըն հեղութեան  
Քաջին քաղէր զերգ .

Ի լուր իւրայոց ,  
Զայս կարգաց քարոզ .  
« Արդարեւ յատուկ  
Է քաջացն Հայոց ,  
Զոյգ ընդ արութեան  
Աշխարհատան ,  
Եւ ըզպաշտօն Գից  
Առնել սեպհական » :

Եւ ինչ դժուարին  
Հայկազուն ձեռին ,

Թէ եւ Դից անգամ  
Մանր երեւեացին :  
Այլ կան Սօս Ամնի .  
Քոյ շղթայ սակի ,  
Եւ յէռ ինձ 'ի դոյն՝  
Շարան մարդարաի :

Ձի բան ճշմարիտ

Գեր քան մարդարիտ՝  
Եւ Հեշտիցն անգամ  
Ձարդ է պատուական » :  
Դիցըս յարգանաց  
Գրչուխ խոնարհեաց ,  
Եւ այսպէս ըղձառ  
Իւր շարունակեաց :

« Ի Հուստիմափուռ<sup>15</sup>

Քաղաք փառաւոր՝  
Չոքայ որոնել ,  
Այլ ներքինին՝ մեր :  
Կալաւ զիս յայնժամ  
Ախտ ինչ ծիւրական ,  
Որ 'ի բժըշկաց  
Կոչէր սիրոյ — բան :

Չօրէն կըմախի

կամ կաղամախի ,

Որ կայծակնահար

Յերկիր հոսիցի ,

Յողի ապաստան ,

Որպէս ուրուական ,

Հուպ առ Քրրիչնայ <sup>14</sup>

Անկանխմ մեհեան :

Մինչեւ անաղան

Ներքինւոյ ընդ այն՝

Անցանել աեսի ,

Եւ աղաչեցի .

« Ո՛հ Տէր , ողորման ,

Մեռանխմ ահան .

Թէ իմ փրկութեան ,

Ճար ունիս , արան » :

Ժպիտ ինչ թագուն

Խառն ընդ արտութիւն՝

Լերկ դիմաց նորա

Բաց զկնճռութիւն :

Յորմէ առաղծա՝

Յոյս նոր յիս եմուտ ,

Թէ դադանեաց իրին  
Զիցէ անձանօթ :

« Դո՛ւ իցեա Արին ,  
Ասաց ներքինին .  
Զոր տեսի կանխաւ՝  
Վառ յարիւն վարդին ,  
Իսկ արդ՝ զն՝ մաշիս ,  
Է՞րու՛մ կղկաթիս .  
Հող ոստիս է , թո՛ղ ,  
Թէ ասլրիլ կամիս :

Տրտմութիւն հողոց ,  
Զո՛ յարարածոց  
Ո՛չ ճեպեաց արդեօք  
Յազիս դրժոխոց » :  
« Անդին իմ կորուստ  
Մեծ է քան զասլրուստ ,  
Կեանք առանց նորա  
Է ինձ հազար մահ :

Կամաւ տանէի  
Կտտանաց Քաղղի ,  
Քան թէ կորստեան ,  
Կուօին կաթողնի » :

Ներքինին գրթաց ,  
Ժրմտացեալ գրնաց ,  
Պատուիրան թողեալ  
Իւրոց պատանեաց :

Զի արագ երագ  
Բարձեալ 'ի դեսպակ ,  
Եւ 'ի ջուր Գանդեաց <sup>15</sup>  
Հանցեն անասակ :  
Զի ըստ սքահար ,  
Յամաք եւ զնդեալ  
Գլխոյ Գրողին  
Կենցաղ Մարդկային :

Օժիտ ճահաւոր  
Եւ կեանք սարեւոր ,  
Ուխտելոց ձօնէր  
Գանդէս փառաւոր :  
Զի մաքրեսցեն զիս  
Ի 'ի դարդ փառալից  
Յասպարանս անդ լւր՝  
Հանցեն յարքունիս :

Ս, Ս ծանրանայր ժամ ,  
Ս, Ս աւել քան դամ :

Մինչ տեսի զարհիւն ,  
 Լոյս ինձ 'ի մըթան :  
 Քանի որատուական ,  
 Զիցէ՛ բարեկամ .

Ար անկեղծ 'ի սէր ,  
 Փորձ 'ի նեղութեան :

Բազմեցաւ առիւտ ,

Յեղ 'ի լսելիս .

Զիւր տխուր եւ լուրջ

Տեսութիւնս անցից :

« Վնդ ասէ՛ ծանեաց ,

Թափառականդ Հայ ,

Զի նիւթէր քեղ սէր

Զարիս անխընայ :

Այլ փորձոյն թողի ,

Առնել խելացի .

Բայց զինչ խեւին ճառ

Կամ սեւին օճառ : —

Շիկնիս հն : Յնձամ .

Զի բարի նըշան

Են սրատկառանք սուրբ

Յայտըս մանկութեան :

Այլ դու միայն չես ,  
Որ հարար աչապէս  
Պաղշոտ ցանկութեան  
Մահաբեր նեախց ,  
Զի թշուառադին  
Քեղ դըտան նորին ,  
Զոր թաղեցեր դու  
Գարշո թիւն հողոյ » :

« Նոցա թիւր անգամ  
Երանի կարդամ .  
Որ 'ի միասին  
Սընան եւ մեռան .  
Ապա ինձ նման ,  
Թշուառ ապերջան .  
Որ զիմ կորուսի  
Ծաղիկ անթառամ :

Յուս բարձեալ համբուն  
Զաւուր ծանրութիւն ,  
Եւ անմասն ելի  
Ի ժամու վարձուն :  
Անց բուրումն անոյշ ,  
Եւ թող ինձ ըզփուշ .

Կրտսեւ կարեւիք

Զուշ իմ եւ դուրուշ » :

« Զո՞ք քեզ , Բարեկամ ,

Ծաղիկ անթառամ .

Զո՞ վաստակոց քոյ՝

Վարձ Արդարութեան

Անուանես , » ասաց .

Ի՛նչ կնճռեալ դիմաց

Արձակեաց առ իս՝

Խոժոռ հայեցուած :

« Զայն յաւէրժ հարսնիկ

Իմ կոչեմ ծաղիկ .

Որ յարեան բոսոր ,

Շողաց զարեւ իւր » :

« Ուրեմն երեւի ,

Զի վարկադարադի ,

Ըզհետ ընթանաս

Գեղոյ օտարի » :

« Գեղոյ օտարի —

Այդ ինձ քան լիցի .

Յորչափ շնչիցեն

Սօս եւ Սօնդիպի » :

« Այն, Սօնդիպլի .  
Եւ ուստ կարելի  
Ի միջի ձերուս ,  
Շաղկապ այսպիսի » :

« Ի սէր Աստուծոյ ,  
Ասան 'ի սլարդոյ .  
Արամբի իցէ  
Զքնաղն աշխարհի » :  
« Արամբի շէ նա .  
Սնկեղծ հաւատան » :  
« Ոչ ես կանամբի  
Վասըն Սօնդիպլեայ » :

« Այլ խըտիր մեծ կայ — »  
— « Ընդ իս եւ ընդ նա .  
Զիմաստ առածիդ  
Զիմանամ ներեան » :  
— « Ասեմ քեզ այն .  
Դու Հայ , նա Հնդու .  
Ազգ՝ ազգի ներհակ ,  
Աղանդ՝ ազանդոյ » :

— « Երբ սիրտ ընդ սրտի  
Սիրով շաղկապի ,

Ոչ ազդ , ոչ ազանդ  
Անդ ունին դառնի » :

« Եւ քանիք այդպէս  
Գրտան սեւերեա .

Յորժամ այր զեղևոն  
Իւր անուանեաց սէր :

Ետաք 'ի սլատանեաց  
Պագշոտ ցանկութեանց՝

Դուլին զոհեցին

Զանուն կուսանաց » : —

« Բարէ զինչ լսեմ .

Ներքինիդ վրսեմ .

Եւ դեռ սէր կոչի ,

Եղևոն այդ զըծիսեմ :

Ես սէր դիտեմ զայն

Բորբոք ջերմութեան ,

Զոր ելոյց Որժիզդ

Յատրուչան բնութեան :

Զի կենդանարար

Սէրըն սլահպանեալ

Ըզմահացուն դից՝

Գիցէ հաւտաար » : —

«Նա՛ որ չարաչար  
Սիրոյ փորձ էառ ,  
Ո՛չ կարէ խտրել  
Ընդ լաւ , ընդ վատթար » :  
« Որ ուղիղ դատի՛  
Որոշել կարէ ,  
Թէ՛ ՚ի մէջ մարդկան ,  
Կայ չար , եւ բարի » :

Այլ պատմեան իշխանն ,  
Ո՞ այն դաւաճան ,  
Որ քաղցրիկ սիրոյ  
Դարձ ետ դառնութեան » :  
« Աւանդ աղետիս ,  
Զխմրդ պատմեցից .  
Ի լուր քո զանլուր  
Գուժկան արկածից » :

Որ միակ դատեր  
Սուրաջայ կայսեր՝  
Բայ խոր ՚ի սրտի  
Վէրս անբուժելի » :  
— Ո՛վ ժամ երջանիկ ,  
Յոր բարեբաստիկ

Հաղորդ գտայ եւ՝  
Վիրաց այդ ոյիկ—

Եւ — »

— Զինչ « եւ » , Քաջադու  
Մի գու իցես նոյն ,  
Որում ուխտէ նա  
Զանձն իւր եւ զանուհի » : —  
« Ես նոյն գոյ յուսամ ,  
Առանց փոխութեան .  
Սիրեցի , սիրեմ ,  
Սիրով կամ եւ լամ » :

ՍՍՏ ոսկեթեւեան՝  
Մանուկ Յանկութեան ,  
Զուլամբ Մօր անկեալ՝  
Զայս աղերսեաց բան :  
« Թէ զիս որդի քոյ ,  
Արուեստին սիրոյ  
Աշակերտ տաս՝ անւր  
Յրմալ այս Հնդու ,  
Զի լեզու նորա՝  
Զանցեալն առարկայ

Նկարէ ունկան ,  
Եւ այնքան ներկայ՝  
Մինչ աչաց պիտոյ ,  
Զիք խնդիր Սիրոյ ,  
Ա՞յս է՝ որ եւ սէր  
Մընաւ դաչացու » :

Իսկ Մօր նորա ուչ  
Յափրչտակ 'ի Սօս ,  
Հաշէր անհամբեր  
Վախճանին երգոց :  
Զի եթէ մարդկան  
Իմն իցէ հաւան  
Օղուն ոլորուն  
Բարբառ խառնութեան ,  
Այ՛ ուրիմն որքան ,  
Գից հաճոյական  
Ոչ իցէ լեզու  
Մեր աստուածասան :  
Ուստի նոյնհետան  
Յասուցեալ Մանկանն ,  
ԶԱրին մեր ճարպիկ  
Յորդորեաց 'ի բան : —

# ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՔ

## ԵՐՐՈՐԴ ԵՐԳՈՅ

1. Աստուած դիպաց, դէպք, դիպում, Բաղդ կամ ճակատագիրք:

էջ. 101 րոշ 21

Տալ է ծառ նման Աստուծոյ կամ սխառւոյ, որպիսի է Փոփոխութեան Երկարացում, ի վերայ տերեւոյ նորա գլխին սակաւին մատեանք Հնդկաց:

2. Սանակրիտ թարգմանի ի մեզ Չոփ կամ զբեռն է յստի՛նէն, և է բարբառինն հաւաքեալ յամենայն լեզուաց երկրին, որով դրեթ է ամենայն մատեանք հնութեանցն դրեցան:

3. Ռաշտ է արքայ կամ թագաւոր:

4. Աշտի չաստուածունի դեղեցկութեան և բաղդի:

5. Սոփոքայ է արքայութիւն ինչ որոյ՝ դից հաստատութեան:

6. Արոյ տեսեալ իցէ զանպաճոյճ և զմերկ կենցաղաւորութիւն Հնդկաց

դհասարակ աւուրբ կենաց , և զանկարծ  
և շախաղանց շուայլութիւն նոցա 'ի  
աօնս Գից կամ 'ի հանդէս ինչ իւրեանց՝  
պաշտմութիւն քան թէ քերթուած հա-  
մարի զդրեալն մեր :

7 . Քիւննիք , կամ ծառք քիւլայ  
պաղոց , որ 'ի բարբառ մեր ՄԱԶ , է  
բոյս ծառացեալ կարի լայն և երկոյն  
տերեօք . մոզն սղիւզանայ մի միայն  
'ի բուն բուսոյն մերձ հարիւրաւոր վա-  
րընդանման պաղովք զմիմեամբ շարե-  
ցելովք , որոց կեղևն է դեղին , մէջն  
փափուկ և թարմ միս , իսկ տերեւ նու-  
րա է ասիակ աղքատաց 'ի կերակուրս ,  
և թուղթ 'ի մանրավաճառս , վասն զի  
Չղային է , և 'ի չոբանալն ոչ փխրի :  
Այլ այս յատկութիւն մանաւանդ խո-  
նաւութեան օգոյ երկրին է շնորհ :

8 . Արմիդդ , Արաժադդ , Մուշթերի  
Զաւաշ , կամ Լոսանիմոզն զբօշէր հո-  
ղագոյն յիրան մարդոց , 'ի գլուխ կոր-  
հան՝ եռանդիւնի թագիւ պսակեալ , ո-  
րոյ ցցուն կամ դարդ երեկր մերթ կա

տար արաղաղի, և մերթ՝ զլուխ վիշապի, յսջն փաթեթ կտաւոյ, և 'ի ձախն՝ դորակ ջրոյ :

Ծ. Դիմու կամ Արդարութիւնն որդի էր ջոճայ որդւոյ Սոսերայ կամ արեւդական՝ գատաւօր դժոխոց, որ վճաէր սղւոյ մեռելոց կամ ելանել 'ի Սոսերայ, յարքայութիւն Ինդրայ, կամ իջանել 'ի Նարայ, կամ 'ի դժոխս : Առնամանգադարիս աղաչեաց զՍիտ տալ իւր զղաւակ, և նա ստէ « Զո՞ կամիս, հարիւր անաւակ և երկայնակեաց, թէ մի համեատ եւ վաղամեռ » : Հոյր ըզվերջինն աղերսեաց, և 'ի լրանալ ամաց մանկանն՝ իբրև աւաքեաց ջոմ առնուլ 'ի բաց զոգի նորա՝ սպաստան եղև առի նա 'ի Վինգա Վիպոյ՝ և ապրեցաւ : Զոմ սպանաւ 'ի մարտին, և երկիր լըցաւ մարդկաւր, զիբ զարհուրեալ աղաչեցին զՍիտ յարուցանել զջոմ 'ի կեանս, որ սպա աւաքեալ զհրեշտակս իւր՝ անխափր հնձեաց զամենայն հասակ :

10. Գատաղնն ստի աշխարհ ստոր.

նոյ կամ գժտիք, յարմար պատաղ և պատաղուն բառից մերոյ :

11. Ընկերել կնոջ ընդ գիշոյ առն ՚ի խարոյկ դաշաղաց՝ կոչի Սրի, որ բարձաւ ՚ի կուլուածոց Բրիտանացւոց առ Բէնգինի կուսակալու : Ի սահմանս նրա բնիկ իշխանութեան Հնդկաց տակաւին կոյ և մնայ այս սովորութիւն :

12. Վահագնի արեգական այսպիսի ուխտ հասարակ էր ՚ի մէջ Ազգաց :

13. Հուստինափուռ, այն է Գիլի բաղաք, զոր կառոյց Հուստի Ռաջա որդի Յագուայ Լուսնորդոյ : Կոչէր և Ինդրպուրա, այսինքն բաղաք Ինդրա, զից երկնից :

14. Բրիչնա դիւցազն Մահարարաթ գրոց, մարմնեղութիւն Ալիշուայ, որ աջակցեալ Պանդուեանց կործանեաց զԹագաւորութիւն Մաղադայ, և ինքն մեռեալ ՚ի Միշաց ընդ աստուածս համարեցաւ : Անասկութիւն սորա ընդ հովուուհեացն Աքիջայ առ Չմնայ գեատի՝ անցանէ քան դավենայն առաս

պել : Նարայ աջակից նորա և նիզակա-  
կից՝ ոչ կարայ կին գասնել առ որում  
նչ էր ներկայ Բրիչնա :

15. Հնդիկ աշխարհագրութիւն յեր-  
կուս կիսաշրջանակս բաժանէ զհողա-  
գունաս մեր . յորոյ զհիւսիսին կոչէ  
Սոճրու . գեղեցիկ կամ գերազանց . իսկ  
զհարաւոյն՝ կոմէրու . այսինքն արեղ և  
մթին : Մէրու է բեւոն . ուր ելանէ  
Գնդա յաւից Վիչնուայ , և ընթացեալ  
ընդ չորս առաջս ընդ շրեոսն բերա-  
նըս կենդանեաց՝ հոսի զառ ՚ի վայր :  
Գանճէս ՚ի բերանոյ կովուն՝ հոսի ընդ  
հարաւ : Բաշու կամ Ռ. Բասս կամ Չի-  
հոն ՚ի բերանոյ ձիոյ՝ հոսի յարևմուտս :  
Սիսս ՚ի բերանոյ փղի՝ հոսի յարևելս .  
իսկ Բասարասսս ՚ի բերանոյ առիւծոյ՝  
հոսի ընդ հիւսիս : Այլք զակն Գան-  
ճէայ դնեն ՚ի լեառն Գեբասայ կամ Գե-  
զասայ . և այլք ևս յայլ և այլ տեղիս :  
Վարսիկ ՚ի վախճան Ռամայան որոյ  
յիշէ թէ՛ Գնդա զհեա զնալով կա-  
ռաց Բագարիթոյ մինչև ՚ի ծով դար-

ճաւ անդրէն 'ի Պատմութեամբ . կատարել ըզ-  
դործ ինչ սիրուն : Ընդ որ զուարճա-  
ցուցեալ Յիսկայ զանուն Սահէրայ ար-  
քայի կարգաց 'ի վերայ ծախուն , և  
զանուն դասեր նորա Բագարապետայ 'ի  
վերայ Գնգայ գետոյն . զի Գնայ և  
Գայր զհետ նորա : Արդ եթէ արմատն  
Գըն միայն 'ի Սանախրիան՝ կարկոյէ հընդ-  
կացուցանել , ապա և արմատ և շա-  
ռաւիղ նորա 'ի մեր բարբառ Գըն և  
Գա կամ Վնա Գա խկապէս հայացու-  
ցանէ մեզ զանուն գետոյս օյստրիկ :



ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

ԵՐԳ ԶՈՐՐՈՐԴ

## ԳՐՈՒ ԱԳ

## ՉՈՐՐՈՐԳԻ ԵՐԳՈՑ

Պատմէ Յօս Գոսու թիւն Մտրոնարայ  
 նէբբինեւոյ՝ պարտիզպանին որդի Ապլի-  
 դաս՝ ուսանի ՚ի մինացէ զէրդ . ներդաշ-  
 նակու թի՛ ձայ՛ ՚ի և ճուսմու թի՛ լեզու ՚ի  
 նորա , գթու թիւն Սօնդիպեայ առ նա ,  
 բանադնացու թի՛քն երկար , դրաւ ել սրբ-  
 տին Ապլիդասայ , յանձն առնել զնա ցը-  
 նէբբինի իւր . կամադեւ բորբոքէ զսէր  
 ՚ի միջի : Տօն Գոս րդայ — Անտառ Չը-  
 ուարճու թե՛ , անարի հանգամանք անձին  
 Ապլիդասայ , մուրացկանու թի՛ : — Գնել  
 զԱնտառն զուարճու թեան ընդ նս ժըշ-  
 տին , Հրի կամ Քրիշնայ տօն՝ կոչուէք  
 Ապլիդասայ — յանդ խմանու թի՛ք Սօնդի-  
 պեայ , վերաւորիլ և ընկեցիլ լինելն ՚ի  
 պարտպէն , սուտ համբաւ զփախտանէ  
 նորա ընդ օտար սիրահարի , Սուրաջայ  
 ուխտ և ելք , — Գիցն հանդէս , դատա-  
 պարտումն Աշմեայ , աւարումն Արի-  
 պալայ առ ՚ի մահ Ապլիդասայ , թշուա-  
 ու ու թի՛ք Սօնդիպեայ , հաշումն վասն Սօ-  
 սայ , պատահումն իրերայ , խօսակցու իք ,  
 և հրաւէր ՚ի հարսանիս : —

ՔԵՆՈՒ

ի

ՍՕՍ ԵՒ ՍՕՆԴԻՊԻ

ԵՐԳ ԶՈՐՐՈՐԴ

« **Ս**ՆԴՍ՝ ՍՕՍ ՎՁԱՆԻ ,  
ՔՈՅ Է ՍՕՆԳԻՊԻ .  
ԱՍԱՅ ՍՊՐՈՆԱԶ .  
ՅՈՃ ԽՄԱՆԱՂԻ :  
ՈՐ ԻԲՐԵՆ ԸՂԾԻՂ  
ՇՈՆՉԱՆԻ ԿԱՐՄԻՐ ,  
ՀՈՅՂԸՆ զԱՐՆԱՅՆԻ  
ՏԻՅ ՍՐՆՈՆՈՂ ԸՄԱՂԷՐ :

ԵՆ ԿՈԿՈՆ ԿՈԿՈՆ ,  
ԶՄՍՂԱՐԱՐ ՄԵԿՈՆ  
ՊԱԿԷԼԻՆ 'Ի ԼԱՆՉ՝  
ԱՐԻԼԵՆԻ ԺՈՅՈՅՆ ,  
ՅԱՅՆԺԱՄՔ ԱՂԱՐԱԽԻՂԱՆ  
ԸՍՄ ՍՈՎՈՐՈՒԹԵԱՆ ,

Ծաղկունս հաւաքէր  
Դից նուիրական :

Ոչ 'ի փունջ հիւսեալ ,  
Ս.ՅԼ յափսէ քաղեալ <sup>1</sup> .  
Բերէր տալ ծաղիկ  
Ծաղկին հաւասար :  
Բայց յաւուր միում ,  
Պըղերդ 'ի պաշտօն .  
Յորդի իւր տայ դայն ,  
Կալիդաս անուն .

Ս.ՅԱ այն ապերախտ  
Կուլին էր դժբաղտ ,  
Որ ապախտ արար  
Զբարին իւր անախտ :  
Ս.ՅԼ յոճ պատմութեան ,  
Թո՛ղ անդրէն դառնամ .  
Լալ կոյր 'ի վերայ  
Կուսին ընտրութեան :

Յորժամ Կալիդաս ,  
Եմուտ ընդ դարբաս  
Մեծ կանանոցի՝  
Արեւուն Հնդկաց .

Բազմէր Սօնդիպի .  
Յաթոս սագուանի <sup>2</sup>  
Եւ ունկըն գնէր  
Խօսուն մինայի <sup>5</sup> :

Որ 'ի մէջ հաւուց ,  
Քոչով մարդախօս .  
Քեղզեղէր հրմա՝  
Զայս տարագ երգոց :  
«Ո՛ հաղար ռաջայ ,  
Գտներ Սուրաջայ .  
Զօր գիշեր 'ի բուն ,  
Կատարեն պաշտօն :

Իսկ ես՝ իսկ ես՝ ըն .  
Մին խղճուկ մինա ,  
Այրիցիմ հրրով  
Սուրբ սիրոյ նորա » :  
Կալիդաս լուեալ՝  
Զոր հաւըն կարգայր .  
Բան 'ի բերանոյն  
Կալաւ անվրթար :

Համարուաց <sup>4</sup> գունակ  
Ախորժ էր հազագ .

Որ այնքան աղղու  
Գեղգեղեաց նուաղ,  
« Իսկ ես՝ իսկ ես՝ մահ,  
Մին խղճուկ մինա .  
Այրիցիմ հըրով  
Սուրբ սիրոյ նորա » :

Մինչ թովու ձայնին  
Հարաւ Արփենին .  
Եւ ըզթոյն յաչաց  
Ընկալաւ քարբին <sup>5</sup> :  
« Հրեշտակ 'ի մարմնի,  
Գան ապայ, ուստի .  
Օրհներգու ընտիր  
'Իցըն հանդիսի » :

« Շնորհալից Ռանի <sup>6</sup> ,  
Որ հորիզմի՝  
Հայրենեաց իմոց  
Շողաս գերարփի :  
Մանուկ աղքատիկ  
Քեզ բերեմ ծաղիկ .  
Որ ամէն ծաղկանց  
Փայլիս գեղեցիկ » :

Գժխօյն զիս յայնժամ ,  
Տես ասէ , իշխանն .  
Թէ որպէս խօսի  
Մանուկ բըրահման :  
« Խեղճն համարի խեւ ,  
Բայց այս քո պարգև .  
Գուտար Արեգական՝  
Ծաղր առնել զինեւ :

Զաղքատ արհամարհ  
Ատուած ոչ արար ,  
Վեհ՝ աղքատ դիտունն  
Քան ճոխ անասունն :  
Զինչ երանութիւն  
Եթէ վարժատունն ,  
Ուսուցէ միայն  
Զաննըչան հնչիւնն :

Որ խմաստակաց  
Արնտախ է պօրծ ,  
Գիտէլ , դոռողիլ ,  
Եւ մութալ ըզհաց :  
Իսկ ես 'ի փորձոց ,  
Ուսայ անդըպրոց :

Զի զոր ինձ կամիմ ,  
Սրարից այլոց :

Սիրել զոր սիրուն ,  
Պաշտել զիմ պաշտօն ,  
Համարիմ անձին՝  
Մեծ իմաստութիւն »  
Ասաց կալիդաս ,  
Սակայն հաւատաս  
Թէ սիրտ Սօնդիպեայ  
Ոչ պատասխանեաց .

« Ա՛ ինձ երանի  
Լինէր յիրաւի ,  
Տեսանել ըզքեզ .  
Որպէս ցանկայի ,  
Գոլ այնքան զոյուն ,  
Որքանդ ես գիտուն .  
Միշտ անվիշտ երգել  
Ըզնուազ սիրոյն :

Ուր երամք հաւուց ,  
Երգեցկաց վերնոց .  
Նա ծառ եւ ծաղկունք  
Սրձադանդք ձորոց ,

Չայնակից եղեալ  
Քրնարիդ ըզմայլ ,  
Պատկէին 'ի լուր  
Քո՛ ըզսիրահար » :

Որում կալիդաս

Բարձուցեալ ասաց .  
« Ե՛ւ աստուածուհիդ  
կարօտիս աստեաց :  
Փոխան տարփանաց ,  
Եւ աշխուժանաց ,  
Հըզօր հանճարոյ ,  
Եւ իմաստութեանց ,

Չոր ո՛չ տալ կարեն ,  
Ո՛չ բառնալ բաւեն .  
Ոսկի եւ արծաթ  
Եւ հալք հանքեղէն ,  
Դո՛ւ ոսկւոյ հաշիս ,  
Գանձո՛ւց դալարիս ,  
Եւ աստուածութեանդ  
Սմօթ չհամարիս :

Վնչ ժամանակիս  
Յորում դիպայ ես ,

Ուր է' աստուածք փողոյ՝  
Վաճառեն դանձինս :  
Թէ կորենս համբաւ  
Անուն քարելաւ .  
Որ քան դամենայն  
Ազնիւ դատեցաւ :

Թող ապա ոսկին ,  
Գիրդ հողոյ շնչին .  
Քոյ չընաշխարհիկ  
Գեղոյ լիցի գին :  
Հայր Արարչու թեան  
Որ գողար 'ի շուշան ' ,  
Իբր յօրորանի  
Բերար յԱվկիան :

Տես զի անպիտան  
Դընէ սա ինքեան ,  
Ծընեալս առ 'ի քէն՝  
Կուլին Բըրահման » :  
Ասաց եւ էանց .  
Ոգւով թախծանաց .  
Այլ սիրան յաւարի  
Սօնդիպեաց մնաց :

Որ սակաւիկ մի՝  
Ակրնկոր հայի ,  
Գոչ ընդարմացեալ  
Յարձան պրղրնձի ,  
Մինչ կամ Աւատար <sup>8</sup> ,  
Զանխուլ մատուցեալ  
Քամեաց 'ի վերայ  
Պեթսի <sup>9</sup> կակղարար :

Ուստի թափ առեալ՝  
Ըզձակատ եհար ,  
«Ո՛հ Հայր ,» առէ ցիւ ,  
«Մեղաց չարաչար :  
Գանձ իւր եմ կարօտ ,  
Որ այսքան ընդոստ՝  
Գիւտի սընտուռոյն  
Պնդիւմ հետամուտ :

Ո՛չ — ո՛չ — դարձցի նա ,  
Յիւր օիրտ ոսկեկայ .  
Զոր 'ի յորողայթ ,  
Գեղոյ որսացայ :  
Գարձիր կալիդան ,  
Սօնդիպի սուղեաց .

Ա՛ռ ցըքեղ անգրէն  
Քո զաղբիւր կենաց » :

« Ձիմ սիրտ տաս դու ինձ ,  
Ո՛չ երբէք առից ,  
Այլ թէ քոյ զըժխոյ ,  
Տաս սիրտ ընդ սրախ ,  
Յայնժամ ասացից ,  
Թէ կայ իսկապէս ,  
Սէր եւ գըթուժիւն  
Յարիւն անմահից » :

Յաւարտել բանիս՝  
Սօնդիպ ասէ ցիս ,  
« Տեսանես հայրիկ ,  
Քանի հրաշալիս ,  
Մերկանայ բանից ,  
Վըսեմ պատանիս .  
Եւ յոճ անմահից  
Յաիրչտակէ զիս » :

Առջիւր 'ի տուն քո ,  
Եւ 'ի գութ սիրոյ ,  
Սընուսջիւր ըզդա՝  
'Ի փնոս Աստուծոյ ,

Զոր ինչ արուեստից  
Գիւտ են հըրաշից •  
Զոր հանձար՝ վերին  
Սրբո՛ զիմաստից :

Եւ սար 'ի սարուց ,  
Շըքեղ ըսպասուց ,  
Յաւելջիր դ՛իւն  
Ըստ ազասորդուց :  
Մինչ տեսցուք իւրիք •  
Պըտղին երախտիք ,  
Կամ անտեսն 'ի մէնջ՝  
Յայանին ասլառնիք » :

Ասաց Սօնդիպի —  
Ս.ՍԼ 'ի գոյն վարդի ,  
Երանդեաց ա՛օթ ,  
Զերեսն արիւննի •  
Եւր երանի՛ տամ ,  
Ոյց բանին անսան •  
Թէ սիրում իցէ՛  
Թէ յատելութեան :

Ահիւ ընկալայ ,  
Զոր պատուիրեաց նա •

Այլ յիս մեկուսի՝  
Զայս ինչ խօսեցայ :  
« Թէ՛ սէր աչք չունի ,  
Զի տեսանիցէ  
Ըզպակասութիւն  
Սիրելւոյ իւրում :

Այլ ինձ աւուրք դան ,  
Եւ իմացում տան .  
Որ զիժ 'ի ծոցի  
Ունայն սընուցի » :  
Իսկ կամ մեր հրգօր ,  
Զանձանօթ ինչ հուր  
'ի մէջ երկոցուն՝  
Բորբեաց օր աւուր :

Այս դուզնաքեաց կայծ ,  
Յայն հրդեհ աճեաց ,  
Որ յաճիւն եդ տուն  
Արեւուն Հնդկաց :  
Մինչ այս եւ մինչ այն ,  
Տօն Գուրգայ ժաման ,  
'ի կայթ եւ կաքաւ ,  
Հար ըզՀնդկաստան :

Յայնժամ եւ սոքին  
Պահ պայմանեցին  
Յանտառ Չուարձութեան  
Չուել միասին :  
Չոր 'ի մէջ Հուստեայ <sup>10</sup> ,  
Եւ Պողիստիթրա <sup>11</sup> ,  
'Ի բլրին Բարձու՝  
Տնկեաց Սակինա <sup>12</sup> :  
Շուրջ զորով Չմնա <sup>13</sup> ,  
Ծոցեալ՝ զովանայ ,  
Եւ սիրայորդոր  
Խառնի 'ի Գնդայ :  
Ուր Սիս <sup>14</sup> տարրանայ  
Տենչից Պարպաթեայ  
Եւ ընդ հովուուհեաց  
Լուղայ Քլրիչնայ <sup>15</sup> :  
Վերածել ըզնոյն  
Աշխարհիս համբուն ,  
Աւազան մեղաց՝  
Եւ արքայութիւն :  
Զի յայնքմ՝ վայրի ,  
Թէ ոք մըկրաի ,

Քաւեալ 'ի մեղաց'  
Յաստուած փոխարկի :

Սատ յաջմէ՛ ծովուն  
Հեղիկ ծածանումն ,  
'ի ձախմէն՝ թաւուա  
Սնոյշ <sup>16</sup> ամբենւոյն :  
Սէղ դալար աստի ,  
Ծառ՝ ծաղիկ անախի ,  
Տան սիրոյ նոցա՝  
Ըզնոր իմն ողի :

Մինչ այնքան՝ դի բան  
Հաս Սրեգական ,  
Եւ եղիտ ըզնա  
Խիտտ հաճ եւ հաւան :  
Զի կոյր հաւատ մեր ,  
Ըզքորմ աղօթկեր ,  
Սռաւել ընտրէ  
Քան սէզն 'ի սուսեր :

Սյլ ինձ ժամանակ  
Խընայէ արձակ ,  
Զանցիցն հիւսել քեզ  
Մանրաղիր ցուցակ :

Ձի մարմնով արկար ,  
Հողով ապիկար ,  
Ձուր արիւն նորա .  
Լեղին ցում նեխեալ :

Որ մինչ խօլն Ռաւիուն <sup>17</sup>  
Բոց վառեալ համբուն  
( Նա՛ որ զկուժիլա <sup>18</sup>  
Շոպեաց 'ի Սելուին . )  
Նկար 'ի պաակեր ,  
Ձարին հանդիսէր  
Վեհադոյն Դից Ռամ ,  
Յասպամեդայն <sup>19</sup> մեր :

Սոսկաց անարին ,  
Յերկիւղ մահածին .  
Եւ 'ի դիւ թու թիւն  
Սպաստան Ազգին ,  
Հզօրն 'ի խօսի ,  
Հէզն 'ի վտանգի ,  
Փախուցեալ թաքեալ  
Յանքոյթինչ տեղի :

Դիւթ էր ցածոզին ,  
Եւ կեղծաւոր սին .

Գիտէր բան 'ի բան  
Կարկատել ուշիմ :  
Յախատ կեղծաւորեալ  
Եւ գայ դալկահար ,  
Զառաջեալ կուսին՝  
Զայս պապաջէ ճառ :  
« Վե՛հ Սուրաջ <sup>20</sup> բինի .  
Տես քանի՞ , քանի՞ ,  
Հաշիմ վասըն քոյ՝  
Հանդերձեալ բաղդի ,  
Որ դամենօրեայ  
Կատարեալ Լաշմեայ <sup>21</sup>  
Անդուլ ճգնութեամբ  
Լցի զտապասա <sup>22</sup> :

Մինչ արժանացայ ,  
Դատեր Սուրաջայ  
Բերել զայս ծաղիկ  
Հրդօրին Կամայ :  
« Այլ սակայն » —  
« Եւ զի՛նչ « այլ սակայն » ,  
« Յինչն քաղես բան .  
Ասա՛ զոր կամիս ,

Առանց խրտրութեան » :

Խրախուսեալ անդէն

Սուտ աստուածորդին

Անկաւ մուրացկան

Յոտրս մահացուին .

« Պարտէզ Անտառին ,

Հաս այսօր 'ի գին .

Ողորմեան Գժխոյ :

Գրնեան դայն վասն իմ » :

« Կամիցիս գրնել ,

Ասան անվեհեր —

Եւ զեպեր ընդ էր

Խառնես 'ի խընդիր :

Սս օգնեցից քեզ ,

Որպէս դու կամիս ,

Միայն մի ապախտ

Զերախտիս հանցես » :

Զայս ասացեալ՝ տայ

Յընէդն անոպայ .

Բիւր 23 աղիւս ոսկւոյ՝

'ի հարկաց Փեկուայ :

Գնաց եւ գրնեաց ,

Զաղինասարաս

Անտառ զուարճութեան

Ամենայն Հնդկաց :

Ուր մտեալ նորուն

Որպէս շուն 'ի բուն ,

Անկուշեաց սիրոյ՝

Սօնդիպեաց մերում :

Գթութիւն առ դեղ .

Է չար այն քաղցկեղ ,

Որ եւ գերախտեաց ,

Մահեաց զուխտ անեղ :

Պարգեւ Սօնդիպեաց ,

Բաշխ Մահադէվայ

Զոր յեղծ շնորհողին

Վարեաց Ռաքիա <sup>24</sup> :

Փոխան արփենւոյն

Եւ առաքինւոյն ,

Զակատեալ ըզհետ ,

Աղճին ազազուն ,

Ե՞րբ գիտաց Վուլին <sup>25</sup> ,

Թէ զինչ իցէ կին .

Թէ փող տաս՝ շքնայ

Զօր ընդ հաղարին ,  
Նդմիք կաւատին ,  
Բովանդակ սերին ,  
Որք զօճան կընոջ  
Խնդրեն՝ քան ըզկին ,

Հուսկ ապա տեսեալ ,  
Եթէ չէր հընար  
Յարդար վըրիժուց  
Սնայտտիժ մընալ .  
Օձն 'ի ներքուստ դաւ  
Նիւթել ըսկսաւ .  
Սրտաքուստ 'ի սէր  
Կեղծաւորեցաւ :

Զուարճանայ Հըրի <sup>26</sup>  
'ի հենդն եւ Հուլի  
Ուր աշխարհ Հնդկաց  
Յնդեալ 'ի խելաց՝  
Յաժի անդադար  
Սփռելով յիրար ,  
Փոշի անդուրի ,  
Եւ բարբառ յիմար :  
Տօն դայս հանդիսեաց

'Ի տանն Կալիդաս .  
Յոր եւ Սօնդիպեայ՝  
Հըրաւէր կարդաց ,  
Եւ ակն յանդիման  
Կոյս պարկեշտութեան՝  
Վարարեալ ըզհետ :  
Վատանունն վըհկան ,

«Տես դժխոյ , ասէ .

Այս այն պարիկ է ,  
Որ յստեղիս իւր  
Ջաշխարհ ըզմայլէ » :  
« Ասան , հրապուրէ .  
Ձի համբարու է ,  
Եւ կորո՛ ըզդա ,  
Թէ եւ սերովբէ » :

«Կորո՛ նախ դու զիս .

Եթէ ասորժիս .  
Ձիք որ յաշխարհի  
Մեկնիցէ ըզմեզ :  
Մինչեւ ցերք կացից  
Լրութեան քոյ ալից » .  
Ասաց Կալիդաս

Յոխորտ զայրալից :

Զզուանաց արժան

Բերանածնին բան .

Զոր թէ եւ աստուած ,

Ոյք լուանն՝ ատեան ,

Գարձուցի յայնժամ ,

« Նոր չիք այդ . իշխանն ,

Փող զո՞ր սինլիքոր ,

Զարար մեծարան » :

« Արդարեւ այդպէս ,

Այլ եկ անս որպէս ,

Ապախտ առաթուր

Կոխեաց զերախախտ :

Մինչ չեւ էր դինին

Տիրացեալ կնճին՝

Մեկնեցաւ կոյս մեր

'ի խորչ առանձին :

Մինչ այս եւ մինչ այն

Գիշեր տըխրական

Ճնշեալ 'ի վերայ ,

Վաստակոց մարդկան ,

Դիւական գործոց

Գծոխաճիգ ծածկոց )  
Ուր անտեսն 'ի մէնջ'  
Կատարեցաւ դործ :

Յայդ հասարակէր  
Եւ քուն յորդորէր  
Սողոխ թմրութեան  
Խոր յընդերրս մեր :  
Ունի զկալիդաս  
Մաճար նորահաս ,  
Ում հովահարէ  
Բորենին 'ի բարձ .

Խրոսովեալ խղճին ,  
Ո՛չ օգտեաց քամին .  
Գոչեաց « Ռադուլի 27 .  
Ո՛ւր է Սօնդիպլի :  
Զի երազ տեսի .  
Երազ քստմնելի ,  
Եթէ կեցցէ նա՝  
Մահ ինձ հասանի .

Օ՛ն բեր Ռանդուլի ,  
Սուսեր էրկասյրի ,  
Եթէ ոչ ծիւ ծիւ

Փանդանիմք վաղիւ » .  
« Գուցէ ջերմութեան  
Նորահաս գինւոյն ,  
Յնդէ դքեղ , » ասաց :  
Համող Համբարուն ,

Որ 'ի մահուանէ  
Երկիւղ ունիցի ,  
'ի գործոց մահու  
Հեռի կալ պիտի » :  
« Բեր ինձ այսրէն սուր  
Որոտաց Ասուր <sup>28</sup>  
Թէ ոչ վաղիւ մեզ  
Վերջին բերէ դօր » :

Ապերախտութիւն  
Դալկանայ իսկոյն  
Դրօշ 'ի դէմքս իւր  
Քարչելով զԳարգօն .  
Զի ժանտ եւ ժըպիրհ ,  
Երեսաց կնճիռ  
Դրժոխոց անդամ ,  
Ածէր արհաւիր :  
Կացցէ կերպարան

Սմենադատան .  
Քան զանիծապարան  
Ապերախատութեան :  
Որով կալիդաս  
կուրացեալ բարեաց  
կանացի ձեռօք  
Բախեաց ըզհարուած :

Սէր արհամարհեալ ,  
Եւ 'ի մահ մատնեալ .  
Յաջոյ սիրայնոյն  
Դի տապաստ մընայր :  
Մինչեւ քերկոքեան  
Պատրաստեն տապան  
Եւ 'ի նոյն եղեալ :  
Դի կիսակենդան ,

Անողորմ սրաիւք ,  
Անարխի ձեռօք .  
Տանին առ կախեն  
Չամբին պարըսպօք .  
Չոր՝ որպէս ասես ,  
Գրտեր վերջապէս .  
Յերախտեաց Քաջիդ

Պանծալի հանդէս .

Յայս վայր միաբան  
Մարդկօրէն մեղան ,  
Իսկ ապա դիւաց  
Զարագնոյն գրտան ,  
Տեսեալ թէ այսքան  
Ոչ քաղէր մեծ բան ,  
Կեղտ յանուէն նորա՝  
Պարսել ըսկսան :

Այն ինչ յակողնի ,  
Զօրէն պաճարի ,  
Քրնով քաղցրու թեան  
Դիւրէաք դողի ,  
Յաղմուկ անհնարին  
Աղաղակ բարձին ,  
« Փախեաւ Սօնդիպի ,  
Յօտար դաւակին » :

Զօրէն շամփշեղոց  
Յարեաք յանկողնոց ,  
Սա պատառ դիւրեաւ՝  
Իսկ նա՝ 'ի մերկուց ,  
Յողի ջերմեռանդ

Յաճաք աստ եւ անդ ,  
Այլ ուր մեզ գիւտն այն ,  
Երբ նա 'ի քոյ տան —

Իսկ յորժամ Սուրաջ ,  
Աղետիցն հաս քաջ .  
Կոծ կրծու արար  
Եւ զո՛հ մարդ հազար :  
Զի որ այսքան մեծ  
Առնէր ողջակէզ ,  
Նա քուրմ աստուծոյ  
Էր եւ Քաջ՝ մարդոյ :

Ապա զաջ պարզեալ  
Գէալ յահեղ տաճար  
Բազնին Բաղաւայ քօ  
Ուխտ այսպէս արար ,  
Թողուլ զերկիր իւր  
Ըզթագ եւ զաթոռ .  
Եւ գալ աստանդիկ  
Յաշխարհ ընդհանուր :

Ի խնդիր զըստեր՝  
Որ , որպէս թուէր ,  
Յարիւն գիւցազանց

Ջիւր խառնեաց եպեր :  
Ջի ուր եւ գտցի ,  
Յողջակէզ հանցի  
Կրոոյ աշխարհին՝  
Ձեռօք հայրենի » :

Եւ ցաւադանի

Իւր՝ այսպէս խօսի ,  
« Գիտիցէք որեւոր .  
Ջի որ մեզս արար ,  
Ոչ թողլով զաւակ՝  
Սթոռոյն ժառանգ ,  
Եւ ոչ Բրահմանաց :  
Բաշխելով կանայս ,

Պարտի ծայրածայր

Յաշխարհ ծանուցեալ  
Ուխտաւոր զընալ  
'Ի տօն եւ տաճար ,  
Սհն ձեզ թողում  
Ձայս մեծ տէրութիւն ,  
Ջի արդարութեամբ  
Վարեսջիք ըզսոյն ,  
Կալարձէք ձեզ սանձ

Զաշխարհիս Հնդկաց  
Ես որպէս մեղայ՝  
Ս. յնպէս քաւեցայց » :  
Հուսկ ամենեցուն  
Զիւր փեսայացուն  
Կալիդաս կոչեալ՝  
Խոր յառանձնութիւն ,

« Զոր ինչ եւ անձին ,  
Թող ասէ անցցին ,  
Կորիցէ 'ի սպառ  
Յիշատակ հորին ,  
Գրլխապարտ լիցի ,  
Որ հէզ Սօնդիպի  
Բընաւ 'ի բերան ,  
Սանուլ ժպրհիցի » :

Աւասիկ քեզ գանձ ,  
Եւ անշարժ կալուած ,  
Հատանեմ զՈրիս <sup>50</sup> ,  
Բանդալ , Բնարիս » :  
Իբրեւ ել արքայ ,  
Իշխանք անտպայ ,  
Զերտսան կալան

Տէրութեան նորա :

Ժնկ վրտանդաւոր .

Զի աշխարհ հանուր

Մատնեցաւ գող ջիր ,

'ի սուր եւ 'ի հուր :

Իսկ վեհ Վ/ց ատեան

Ընդ այս անարժան

Արարս արջայի՛

Զայրացեալ ցասեան :

Վասն որոյ Վ. իշնու <sup>31</sup>

Իբր գրոց հրոյ ,

Շարժեալ 'ի հիմանց

Զարհին Սոսերու <sup>32</sup> ,

Լեառն երազածոյ .

Ոյր նիստ արատոյ

Պահանջէ գող ջիր ,

Իբր գնտոյ մերոյ :

Եւ 'ի բարձրաբերձ

Ոսկեձոյլ գահից ,

Ուր իշխէր Նաշմի

Գեղոյ եւ բաղդից ,

Յորտա ամպրոպաց

Չառաջեալ կոչեաց ,  
« Զինչ այս քո , ապէ ,  
Սեկարդ արարած :

Որ զօձ մահաթոյն

Գեղով վարվառուն՝

'ի կատար բաղդի

Պահեալ հաստատուն ,

Զեղծուն չարաչար

Զիմ ասն Սւաթար 33 ,

Կարդ տիեզերաց՝

Երջես վեր 'ի վայր :

Զիմ պարգեւ բարեաց ,

Չարաց պատուհաս ,

Յաղարտ հանելով

Յայդ հէք կալիդաս :

Ում փոխան պատժոց ,

Ճոխ անձրեւ զարդուց ,

Տեղացեր այսքան

Յայրիդ չարադործ :

Համայն աստուածոց

Հակառակ այս դործ ,

Սրժանի է միշտ՝

Սրդար վրիժուց .  
Վասնորոյ 'նդ բարձու  
Գահուդ 'ի Սումրու .  
Խորխորատ կասեայ <sup>34</sup>

Լիցի զնդան քոյ ,  
Իսկ Վիրապուլա <sup>35</sup>  
Իշխան Սյովդայ  
Եղեռնագործիդ  
Կարգեսցի 'ի մահ :  
